



## 9-րդ դասարանի ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

# ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 5

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

#### ***Միտելի՛ աշակերտ***

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

***Մաղթում ենք հաջողություն***

1

**Մնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) ունեն քլորոֆիլ
- 2) ունեն սահմանափակ աճ
- 3) արտազատում են միզանյութ
- 4) ավտոտրոֆ օրգանիզմներ են

2

**Ի՞նչն է բնորոշ երկշաքիլավորների մեծամասնությանը:**

- 1) առանցքային արմատային համակարգը
- 2) տերևների աղեղնաջիղ ջղավորությունը
- 3) սերմնամաշկի դժվար անջատումը
- 4) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը

3

**Սպիտակ պլանարիայի օրգանիզմից ինչպե՞ս են հեռանում սննդի չմարսված մնացորդները:**

- 1) հետանցքով
- 2) բերանային անցքով
- 3) արտազատող անցքով
- 4) կծկուն վակուոլով

4

**Ինչը՞ բնորոշ չէ ոսկրային ձկներին:**

- 1) կողագծի միջոցով ընկալում են ջրի տատանումները
- 2) արյունատար համակարգը փակ է
- 3) մարմինը կազմված է գլխից, իրանից և պոչից
- 4) շնչում են թոքերով

5

**Ոչ լրիվ միջնապատով եռախորշ սիրտը էվոլյուցիայի ընթացքում ո՞ր կենդանիների օրգանիզմում է ձևավորվել:**

- 1) թռչունների
- 2) կաթնասունների
- 3) սակավախոզանների
- 4) սողունների

6

**Ի՞նչ հաջորդականությամբ են դասավորված կաթնասունների մարսողական համակարգի բաժինները:**

- 1) բերան, ստամոքս, կերակրափող, բարակ աղի, ուղիղ աղի, հաստ աղի
- 2) կլան, կերակրափող, ստամոքս, հաստ աղի, բարակ աղի, ուղիղ աղի
- 3) բերան, կերակրափող, կլան, ստամոքս, բարակ աղի, հաստ աղի, ուղիղ աղի
- 4) բերան, կլան, կերակրափող, ստամոքս, բարակ աղի, հաստ աղի, ուղիղ աղի

7

**Մարդու ո՞ր հիվանդությունն է առաջանում վահանաձև գեղձի հորմոնի գերարտադրության հետևանքով:**

- 1) լորձայտուց
- 2) բազեդովյան
- 3) թզուկություն
- 4) գաճաճություն (կրետինիզմ)

8

**Որտե՞ղ է տեղի ունենում տեսողական զգայնության վերջնական ձևավորումը:**

- 1) անոթաթաղանթում
- 2) ապակենման մարմնում
- 3) ակնազնդի լուսաթափանցիկ եղջերաթաղանթում
- 4) մեծ կիսագնդերի կեղևի տեսողական բլթում

9

**Նշվածներից ո՞րն է մարդու ստորին ազատ վերջույթների կմախքի ոսկրերից:**

- 1) բազուկոսկր
- 2) սրունքոսկր
- 3) կոնքոսկր
- 4) ճաճանչոսկր

10

**Ի՞նչ է կատարվում ներշնչման ժամանակ մարդու օրգանիզմում:**

- 1) միջկողային մկանների թուլացում
- 2) ստոծանու մկանների թուլացում
- 3) կրծքավանդակի խոռոչի ծավալի փոքրացում
- 4) միջկողային մկանների կծկում

11

**Ի՞նչ ատամներ են տեղակայված մարդու յուրաքանչյուր ծնոտում:**

- 1) 4 կտրիչներ, 2 ժանիքներ, 4 փոքր և 6 մեծ աղորիքներ
- 2) 2 կտրիչներ, 4 ժանիքներ, 2 փոքր և 6 մեծ աղորիքներ
- 3) 4 կտրիչներ, 1 ժանիք, 4 փոքր և 8 մեծ աղորիքներ
- 4) 2 կտրիչներ, 2 ժանիքներ, 6 փոքր և 4 մեծ աղորիքներ

**12** Ի՞նչ հիվանդություն է առաջանում A վիտամինի թերվիտամինոզից:

- 1) հավկուրություն
- 2) ցինգա
- 3) բերի-բերի
- 4) ռախիտ

**13** Մարդու մաշկում ո՞ր ընկալիչները կան:

- 1) շոշափական
- 2) գունազգաց
- 3) լսողական
- 4) հոտազգաց

**14** Սովորաբար ի՞նչ չի պարունակում առողջ մարդու երկրորդային մեզը:

- 1) միզանյութ
- 2) սպիտակուց
- 3) միզաթթու
- 4) ջուր

**15** Ո՞ր օրգանոիդի առկայությունն է բնորոշ և՛ էուկարիոտներին, և՛ պրոկարիոտներին:

- 1) ռիբոսոմի
- 2) միտոքոնդրիումի
- 3) Գոլջիի ապարատի
- 4) էնդոպլազմային ցանցի

**16** Ո՞ր շարքում նշված նյութերն են առաջանում ֆոտոսինթեզի մթնային փուլում:

- 1) մոլեկուլային թթվածին, ԱԵՖ, ատոմային ջրածին
- 2) ածխաջրեր
- 3) մոլեկուլային թթվածին, ԱԵՖ
- 4) ատոմային ջրածին, ԱԵՖ

**17** Ո՞ր նյութերի սինթեզն է բնորոշ ողորկ էնդոպլազմային ցանցին:

- 1) ԱԵՖ-ի և նուկլեինաթթուների
- 2) ածխաջրերի և լիպիդների
- 3) սպիտակուցների
- 4) նուկլեինաթթուների

**18** Ի՞նչ է տեղի ունենում միտոզի անաֆազում:

- 1) քրոմատիդների տարամիտում դեպի բջջի բևեռները
- 2) կորիզաթաղանթի լուծում
- 3) քրոմոսոմների դասավորում ցիտոպլազմի հասարակածում
- 4) ցենտրիոլների իրարից հեռացում

**19** Փուլերի ո՞ր հաջորդականությունն է բնորոշ կենդանիների թերի կերպարանափոխությանը ուղեկցվող զարգացմանը:

- 1) ձու - հասուն կենդանի - հարսնյակ
- 2) ձու - թրթուր - հասուն կենդանի
- 3) ձու - թրթուր - հարսնյակ - հասուն կենդանի
- 4) ձու - հարսնյակ- թրթուր - հասուն կենդանի

**20** Ի՞նչ է գենոտիպը:

- 1) օրգանիզմի արտաքին հատկանիշների ամբողջությունն է
- 2) օրգանիզմի գենների ամբողջությունն է
- 3) օրգանիզմի քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմի գենների ամբողջությունն է
- 4) պոպուլյացիայի ներքին հատկանիշների և գենների ամբողջությունն է

**21** Ո՞րն է կոնսումենտ:

- 1) քենոսինթեզող բակտերիան
- 2) կապտականաչ ջրիմուռը
- 3) մակաբույժ որդը
- 4) կանաչ բույսը

**22** Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն:

- 1) քամին
- 2) գիշատչությունը
- 3) միջավայրի թթվայնությունը
- 4) միջավայրի խոնավությունը

**23** Ո՞ր օրգանիզմներն են տիֆ և ժանտախտ հիվանդությունների հարուցիչները:

Պատասխան՝ \_\_\_\_\_

24 Ո՞րն է նյարդային համակարգի կառուցվածքային և գործառական միավորը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

25 Մարդու օրգանիզմում որտե՞ղ է արտադրվում լեդին:

Պատասխան՝ \_\_\_\_\_

26 Արյան ո՞ր խումբն ունեցող մարդիկ են համարվում համընդհանուր (ունիվերսալ) դոնորներ:

Պատասխան՝ \_\_\_\_\_

27 Ո՞ր մուտացիայի դեպքում է մեկ գենի սահմաններում կատարվում մեկ կամ մի քանի նուկլեոտիդների փոխարինում:

Պատասխան՝ \_\_\_\_\_

28 Ըստ Մենդելի առաջին օրենքի ի՞նչ գույն կունենան դեղին (հոմոզիգոտ) և կանաչ սերմերով ոլոռների խաչասերման արդյունքում ստացված հիբրիդների առաջին սերնդի բույսերի սերմերը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

29 Որոշ բույսերի ծաղիկների մասերը խիստ հարմարված են փոշոտող միջատների չափերին: Սա բնական ընտրության ո՞ր ձևի ազդեցության արդյունք է:

Պատասխան՝ \_\_\_\_\_

30 Ո՞ր էվոլյուցիոն փոփոխություններն են օրգանիզմները տանում դեպի կազմավորվածության ընդհանուր վերելք, բարդացնում նրանց կառուցվածքը, բարձրացնում կենսագործունեության ուժգնությունը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

31

**Տրված 4 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ» տարբերակներից որևէ մեկը:**

1. սպիտակուցները բջջում կատարում են փոխադրական գործառույթ
2. սպիտակուցների մոնոմերները ամինաթթուներն են
3. օսլան, գլիկոգենը միաշաքարներ են
4. ճարպերը կարող են լինել ջրի աղբյուր

32

**Նկարագրել մակաբուծությունը, որպես օրգանիզմների միջև գոյություն ունեցող փոխհարաբերության ձև:**

## Պատասխանների ձևաթուղթ Կենսաբանություն

**Եղևք ուշադիր**

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20		
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	1
	2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	2
	3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	3
	4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	4

	21	22	Միայն նշված պատասխանները փոխելու տեղը		Միայն նշված պատասխանները փոխելու տեղը	
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

Մտաբարձրանքի համարը	23	<input type="text"/>	27	<input type="text"/>
	24	<input type="text"/>	28	<input type="text"/>
	25	<input type="text"/>	29	<input type="text"/>
	26	<input type="text"/>	30	<input type="text"/>

Միայն նշված պատասխանը փոխելու տեղը

Պնդումների փունջ					Պնդ. փունջ		Փոխված պատասխանների քանակը
31	Ճիշտ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	31	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Սխալ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Ճիշտ է	<input type="checkbox"/>	
	Զգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Սխալ է	<input type="checkbox"/>	
					Զգիտեմ	<input type="checkbox"/>	

### Լրացնում է ստուգողը Ընդարձակ պատասխանով առաջադրանքի միավորը

32  
1

Հանձնաժողովի անդամներ՝  
1. ....  
2. ....  
Հանձնաժողովի նախագահ՝  
.....

Միավորների գումարը	
Գնահատականը	